Զ

ԶԱՒԷՆ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐ ԵՂԻԱՅԵԱՆ, ՊԿ.— Ծ. Մուսուլ 1868 սեպտ. 9ին. հայրը Սղերդցի Առեսիս քհ. աւագերէց Պաղտատի։ Աշակերտ և միաբան Արմաշու Դպրեվանքին. 1890—1895. Ձռ. 1895ին Արմաշի մէջ։ Սամաթիոյ եւ Խասգիւղի քարոզիչ (1897—1898). առ. տեղապահ և ապա առաջնորդ Կարնոյ (1898-1907). առ. տեղապահ Վանի (1908—9). Ա.ռ. Տիգրանակերտի (1909—1913)։ Ձեռնադրուած է եպս. 1910ին, և ընտրուած պատրիարք Կ. Պոլսի 1913 Օգոստ. 30ին։ Քաղաքական պատճառներով 1916ին տարագրուեցաւ Պաղտատ և ապա Մուսուլ. իսկ 1919ին դարձաւ աքսորէն եւ հաստատուեցաւ իր պաշտօնին մէջ։ 1920ին գնաց Անգլիա և Ֆրանսա, Հայ Պատուիրակութեան օժանդակելու համար. ներկայացաւ Մեծն Բրիտանիոյ թագաւոր Ճորճ Ե.ին, Արտաքին Գործոց նախարարին և այլ պետական մարդոց, ինչպէս նաև վայելեց սիրալիր ընդունելութիւնը Բէնթըրպըրիի արքեպս. Docteur R. Davidsonի (այժմ Baron)։ Տեսակցեցաւ նաև Ֆրանսայի Հանրապետութեան Նախագահ Տէշանէլին եւ վարչապետ Միլլըրանին հետ։ 1922ին քաղաքական դէպքերու հետևանքով ստիպուեցաւ թողուլ իր աթոռը և հեռանալ պաշտօնէն։ 1924ին ուխտի կուգայ Երուսաղէմ և Ս. Յակոբի վանքը։ 1925ին ալ կ'այցելէ Ս. Յակոբ իր և բարերար Կարապետ Մելգոնեանի անուամբ առաջարկելու որ Մելգոնեան նուիրատուութիւնը ընդունուի վանքին կողմէն, ինչպէս նաև անոր մասակարարութիւնը. սակայն Միաբանութիւնը ինչ ինչ ներքին պատճառներով կը մերժէ այդ առաջարկը (Արձագր. Տն. Ժողովի, 1925)։

ԶԱՒԷՆ ՎՐԴ. ՎԱՐԺԵԱՆ, ՕՎԱՃԸԳՑԻ (Նիկոմիդիա). — Մբ. Ծ. 1885ին, Ձռ. 1918ին, Տբ. 1922ին, գանձապետ վանուց 1928ին։

ԶԱՔԱՐԻԱ ԵՊՍ. ԱՐԵՒԵԼՑԻ.— Մբ. Խոստ. և դարպասընկալ. 1791ի վեց նազարներէն մին։ Կը յիշատակուի (ՄԶ Թ. 36)